Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ

1940 թ. ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի երկրաբանական ինստիտուտի կազմում ձևավորվում է մի խումբ, որը կոչված էր մշակելու հանրապետության ջրային ռեսուրսների օգտագործման գլխավոր պլանի տնտեսագիտական մասը: Այդ հիմքի վրա 1941 թ. ստեղծվում է տնտեսագիտության սեկտոր (ղեկ. Ս. Խրիմլյան), որը միավորում էր արդյունաբերության էկոնոմիկան, գյուղատնտեսության էկոնոմիկայի և քարտեզագրական լաբորատորիայով աշխարհագրության խմբերը: Դա հանրապետությունում տնտեսագիտական բնույթի հետազոտություններ իրականացնող առաջին կառույցն էր, որը 1943 թ. ընդգրկվեց Հայկական ՍՍՀ նորաստեղծ գիտությունների ակադեմիայի կազմում: Սեկտորի հետագա տասնամյակի հետազոտական գործունեությունը վերաբերում էր Հայաստանի տնտեսական պատմության, արդյունաբերության էկոնոմիկայի, երկաթուղային տրանսպորտի հարցերին: Այդ տարիներին մշակվել են հանձնարարականներ տարածքային կտրվածքով մեքենաշինական ձեռնարկությունների մասնագիտացման ու կոոպերացման վերաբերյալ, տրվել հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների տարածքային տեղաբաշխման նկարագրությունը, ստեղծվել է տնտեսական քարտեզ, որն արտադրողական ուժերի տարածքային տեղաբաշխման առաջին փորձն էր, ուրվագծվել են հանրապետության երկաթուղային տրանսպորտի զարգացման հիմնական ուղիները:

Այնուամենայնիվ, հանրապետության առանց այն էլ սակավ տնտեսագետ մասնագետները գործում էին անջատ-անջատ՝ տարբեր գերատեսչական կազմակերպություններում, բարձրագույն ուսումնական հաստատությունների ամբիոններում: Հետազոտական աշխատանքները նեղ էին իրենց ընդգրկումներում, ցրված, իսկ հրատարակվող աշխատանքները՝ խիստ սակավ:

1955-ին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմում գործող տնտեսագիտության սեկտորը վերակազմավորվում է տնտեսագիտության ինստիտուտի (տնօրեն՝ Ա. Մարուխյան)՝ սկզբնավորելով վերջինիս տարեգրությունը, իսկ 1999 թ. անվանակոչվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Քոթանյանի անվամբ: Ինստիտուտն ուներ երեք բաժին՝ քաղաքատնտեսության և ժողովրդական տնտեսության պատմության, արդյունաբերության էկոնոմիկայի և գյուղատնտեսության էկոնոմիկայի: Ինստիտուտում կատարվող աշխատանքները հիմնականում վերաբերում էին ճյուղային տնտեսագիտության հարցերին:

1960 թ. ինստիտուտի տնօրեն է նշանակվում Արտաշես Առաքելյանը: Ինստիտուտի համար սկսվում է նոր շրջան՝ հետազոտական գործունեության, նոր մշակումների և գիտական կադրերի պատրաստման առումներով: Կազմակերպվում են տնտեսական կապերի համալիր պրոբլեմների և կապիտալ ներդրումների արդյունավետության ու արդյունաբերության տեղաբաշխման բաժինները, տնտեսավիճակագրական լաբորատորիան: 1964–65 թթ. ստեղծվում են տնտհաշվարկի և նյութական շահագրգռվածության, իսկ այնուհետև՝ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառման բաժինները: Վերափոխվեց բաժինների թեմատիկան: Ինստիտուտի գործունեությունը ստանում է ծրագրային ուղղվածություն՝ երկարատև ժամանակի կտրվածքով: Տնտեսագիտական հետազոտությունների որոնումների առանցքը դառնում են հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրները, լույս են տեսնում բազմաթիվ աշխատություններ՝ առաջադրույթի տեսության ու կիրառական բազմաթիվ կողմերի արծարծումներով: Նշված թեմատիկայի շրջանակներում Ա. Առաքելյանի «Использование основных фондов» (М., 1954), «Хозрасчет и использование основных фондов» (М., 1954), «Воспроизводство основных фондов в СССР» (М., 1970), «Научно-технический прогресс в СССР» (М., 1978) *և այլ աշխատություններում վերլուծվում են հիմնական ֆոնդերի ձևերն ու զարգացման օրինաչափությունները, արդյունավետության բարձրացման և օգտագործման ուղիները, օգտագործվող սարքավորումների տարբեր խմբերի միջև օպտիմալ համամասնությունների սահմանումը, բացահայտվում են ֆոնդահատույցի ձեռնարկությունների, ճյուղերի և վերարտադրության մյուս օղակների կառուցվածքի միջև գոյություն ունեցող կապերը: Իսկ Թ. Թորոսյանի* «Эффективность производственных накоплений в промышленности Армянской ССР» (1980) ¨ «Фонды производственного накопления и пути его эффективного использования в условиях развитого социализма» (1985) *աշխատությունները վերաբերում են հանրապետության արդյունաբերության արտադրական կուտակման հարցերին:*

Ինստիտուտի թեմատիկան համահունչ էր Խորհրդային Միության առաջատար կենտրոնների հետազոտական նոր ուղղություններին: 1960-ականներին մաթեմատիկական մեթոդների կիրառմամբ մշակվում են ՀՍՍՀ տնտեսության ամփոփ ցուցանիշների հեռանկարային տարբերակներ, ինչպես նաև հիմնական ֆոնդերի և արտադրական կարողությունների օպտիմալ օգտագործման տնտեսագիտական մաթեմատիկական մոդել (Վ. Դաղայան, Ա. Հարությունյան, Ս. Սուքիասյան):

Կապիտալ ներդրումների առավել նպատակահարմար ուղղությունների ընտրության և դրանց արդյունավետ գնահատման խնդիրներն են քննարկվում Բ. Եղիազարյանի «Оценки экономической эффективности капитальных вложений в промышленности» (1968), «Капитальные вложения и основные фонды в народном хозяйстве Армянской ССР на перспективу» (1971) *մենագրություններում, որոնցում որոշակի մեթոդաբանական դիրքերից առաջարկվում է կապիտալ ներդրումների այլընտրանքների համեմատական արդյունավետության ճշգրիտ գնահատում, ա-*

պա կապիտալ ներդրումների օպտիմալ տարբերակի ընտրության չափանիշի և արդյունավետության ցուցանիշի հիմնավորում, ինչը կարևոր է արդյունքի ստացման տեսանկյունից:

Ինստիտուտի հետազոտական գործունեությունը հատկանշվում է տնտեսության տարբեր ոլորտներն ընդգրկող ուսումնասիրություններով: Կ. Խուրշուդյանի աշխատանքները գրեթե բացառապես վերաբերում են տրանսպորտի էկոնոմիկայի հարցերին: Դրանցում («Принципы распределения перевозок между железнодорожным и автомобильным транспортом в условиях Армянской ССР, 1957», *«Ավտոմոբիլային տրանսպորտի վիճակը և զարգացման հեռանկարները Հայկական ՍՍՌ-ում, 1961») փորձ է արվել լուսաբանել հանրապետության բեռնատար ավտոմոբիլային պարկի ռացիոնալ օգտագործման, ավտոտնտեսությունների մասշտաբների և ավտոմոբիլային երթևեկության առաջավոր համակարգերի ընտրության, ավտոտրանսպորտի հեռանկարային զարգացման հարցերը, արծարծվել է տրանսպորտի բոլոր ձևերի համամասնական բաշխման խնդիրները:*

Արտադրության արդյունավետության, երկրորդային հումքի օգտագործման, տնտեսական մեխանիզմի վերափոխումների, վերջնական արդյունքների կառավարման թեմատիկան դիտարկվում է Ա. Մխիթարյանի «Управление конечными результатами технического развития производства» (1982), *«Երկրորդային ռեսուրսների օգտագործումը Հայկական ԽՍՀ-ում» (1989, համահեղինակ) աշխատություններում: Հիմնավորվում է հասարակական աշխատանքի արդյունավետությունն արտահայտող արտադրության արդյունավետություն և վերարտադրության արդյունավետություն երկու տարբեր տնտեսական կատեգորիաների կիրառման անհրաժեշտությունը, մերժելով այն արմատացած տեսակետը, ըստ որի արտադրության արդյունավետության հիմնահարցը ձեռնարկություններում և արդյունաբերության ճյուղերում մեծապես տարբերվում է հարցի դրվածքից ամբողջ տնտեսության մասշտաբով: Այս առումով էլ դիտարկվում են կառավարման երկու կարևորագույն ֆունկցիաները՝ պլանավորումը և խթանումը, առաջադրում նոր ցուցանիշներ ու դրանց հաշվարկման մեթոդիկա:*

Մյուս դրույթը, որն արծարծվում էր ինստիտուտի հետազոտական պլաններում, արտադրական ռեսուրսների օգտագործման գնահատման հարցերն էին: Բ. Սելվինագյանի «Արտադրական ռեսուրսների օգտագործման տնտեսական գնահատումը արդյունահանող արտադրության մեջ» (1979) աշխատանքում, ի տարբերություն ընդերքի բնական հարստությունների օգտագործման վերաբերյալ գոյություն ունեցող անվճարելիության տեսակետի, պաշտպանվում է հանքահումքային ռեսուրսների բնագավառում դրանց գնագոյացման երկգնացուցակային համակարգը՝ առանձնացնելով մեծածախ և հաշվարկային գները, մշակվել է գների հաշվարկման մեթոդական նոր համակարգ:

Ժամանակի հետ փոխվում էր գիտական և արտադրական գործունեությանփոխներ գործության բնույթը:Գիտության և արտադրության միջև գիտատեխնիկական ու սոցիալ-տնտեսական բարդացող կապերն ուղեկցվում են տնտեսական, իրավական, վարչական և հասարակական այլ նոր-

մերով ու նորմատիվներով բնութագրվող հասարակական պայմանների որակական տեղաշարժերով: Սոցիալ-տնտեսականի համեմատությամբ գիտատեխնիկական կապերի առաջանցիկ և անհամամասնական զարգացումը հանգեցրել էր գիտություն-արտադրություն համակարգում ֆունկցիոնալ ու հասարակական պայմանների փոխներգործության միջև որոշակի անհամապատասխանության: Գ. Խանիկյանի «Наука-производство: вопросы взаимодействия и управления» (1988) *աշխատությունն այդ անհամապատասխանության լուծումների մասին է՝ գիտությունը և արտադրությունը դիտարկելով որպես համակարգային կազմավորում, օրգանական միասնություն: Ի դեպ, 1970-ական թվականներին ինստի-տուտում կազմակերպվել էր գիտության էկոնոմիկա մասնագիտությամբ զբաղվող խումբ, որի հետազոտական աշխատանքով, ըստ էության, հանրապետությունում ձևավորվեց «գիտության էկոնոմիկա» ուղղությունը:*

Ինստիտուտում կատարվող հետազոտությունների մի այլ շերտ վերաբերում էր տնտեսական մեխանիզմի կատարելագործման և նյութական շահագրգռվածության հարցերին (Ա. Առաքելյան, Մ. Քոթանյան, Ռ. Միրզոյան):

1960-ական թվականներին ժողովրդական տնտեսության արդյունավետության բարձրացման օրակարգային հարց էր դարձել պլանավորման պրակտիկայում միջճյուղային հաշվեկշռի մեթոդի օգտագործումը: Այս մեթոդի նշանակությունը դուրս էր եկել զուտ տեսության շրջանակներից՝ դարձել պրակտիկ անհրաժեշտություն: Շ. Մարգարյանի անմիջական ղեկավարությամբ և մասնակցությամբ ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում կազմվել են հանրապետության առաջին միջճյուղային հաշվեկշիռները, որոնց տեսական ու գործնական արդյունքներն ամփոփվել են □Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության միջճյուղային կապերը□ (1970) մենագրության մեջ: Աշխատության մեջ ժողովրդատնտեսական համամասնությունների ու միջճյուղային կապերի վերլուծության հիման վրա քննարկվում են պլանավորման կատարելագործման հիմնահարցերը: Ցույց է տրվում միջճյուղային հաշվեկշռի դերն ու նշանակությունը: Պարզաբանվում են հաշվետու հաշվեկշիռ կազմելու մի շարք մեթոդաբանական խնդիրներ, հատկապես ժողովրդատնտեսական ու միջճյուղային համամասնությունների վերլուծության համար տնտեսական շրջանում այդ հաշվեկշռի առանձնահատկությունների բացահայտման առումով:

Արգասաբեր էր ագրարային ոլորտի հետ կապված ինստիտուտում կատարվող ուսումնասիրությունները: Հատկապես ուշագրավ էին Ն. Մանասերյանի «Проблемы экономического выравнивания в сельском хозяйстве» (1978), «Дифференциальная рента и рентабельность колхозов» (1979), *Լ. Ադամյանի «Հողի գնահատման տնտեսական պրոբլեմները Հայկական ՍՍՀ-ում» (1979, համահեղինակ Ն. Մանասերյան), Լ. Ադամյանի* «Экономическая оценка земли» (1970, соавтор К. Посошникова) *աշխատությունները: Դրանցում, բացի զուտ տնտեսական հարթությունից, քննարկվում են ռենտայի հիմնահարցի կոնկրետ տեսական տեսանկյունները, կոլտնտեսություններում դիֆերենցիալ ռենտայի դերը, այն կապերը, որոնք գոյություն ունեին ռենտայի կատեգորիայի և կոլտնտեսութ-*

յունների եկամուտների ձևավորման ու բաշխման, վերարտադրության պայմանների հավասարեցման հարցերի միջև: Վերանայվում են մի շարք դրույթներ, որոնք չեն արտահայտում տնտեսության իրական վիճակը և առաջարկվում են նոր լուծումներ: Դիֆերենցիալ ռենտայի ձևավորման ու իրացման պայմանները կապվում են կոլտնտեսային արտադրության շահութաբերության ընդհանուր հարցերի հետ, ցույց է տրվում լեռնային շրջանների կոլտնտեսությունների համատարած դիֆերենցիալ վնասների, լավագույն հողերի անտնտեսվար օգտագործման և աննախադեպ զանգվածային «դրսևորումների» (լքման) մասին: Հողը ԽՍՀՄ-ում ազգայնացված էր և ենթակա չէր առք ու վաճառքի: Սակայն միայն վարչական միջամտության եղանակով՝ ելակետ ունենալով ռեսուրսների անվճար օգտագործման կոնցեպցիան, երբ հայտնի չէ տվյալ հողամասի դրամական գնահատականը, նրա գինը, հնարավոր չէ որոշել նրա պահպանման հանրորեն անհրաժեշտ ծախսերը և լուծել բնության պահպանման խնդիրը զուտ տնտեսական առումով, ինչպես նաև անհնար է գիտականորեն հիմնավորել գյուղատնտեսական ձեռնարկությունների պետական պարտավորությունների ծավալը, առաջարկելով հանրապետությունում օգտագործելի հողերի գնահատման կոնկրետ սկզբունքներ և մեթոդիկա:

Տասնյակ տարիներ ինստիտուտի հետազոտական մյուս ոլորտներից էին ժողովրդագրության և զբաղվածության քաղաքականության մշակման, բնակչության ու աշխատանքային ռեսուրսների կառավարման փոփոխությունների և կանխատեսման հարցերը, որոնք ամփոփվել են «Բնակչության ընդլայնված վերարտադրությունը և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը 1966–1985 թթ. Հայկական ՍՍՀ-ում» (1968) կոլեկտիվ աշխատությունում՝ Վ. Խոջաբեկյանի ղեկավարությամբ: Նրա հեղինակությամբ լույս են տեսել «Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմները» (1976), «Демографические аспекты урбанизации в Армянской ССР» *(1990, համահեղինակությամբ) և այլ աշխատություններ: XIX–XX դարերում Հայաստանի բնակչության աճի և տեղաշարժերի օրինաչափությունների պատմությունն ամփոփված է նրա □Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX–XX դարերում, XXI դարի շեմին□ (2001) մենագրությունում, որում մեծ տեղ է հատկացվում Անդրկովկասում հայերի տարաբնակեցման տեղաշարժերի և զբաղմունքի հիմնախնդիրներին, ՀՀ բնակչության վերարտադրության ու միգրացիայի անցյալ և արդի փուլի առանձնահատկություններին:*

1950-ական թվականների վերջերից սկսած՝ ինստիտուտում հետազոտություններ են իրականացվել Հայաստանի տնտեսական պատմության և հայ տնտեսագիտական մտքի պատմության բնագավառներում: Հ. Թումանյանի «Экономическое развитие Армении» (ч. I, 1954, ч. II, 1956), *Մ. Ադոնցի* «Экономическое развитие Восточной Армении» (1957), *«Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին» (1968), Մ. Եգանյանի «Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները» (1964) և այլ աշխատություններ պատկերացում են տալիս պարսկական տիրապետության ժամանակ գո-*

յություն ունեցող հասարակական-քաղաքական կարգի, հողային սեփականության և հողատիրության ձևերի, Ռուսաստանի կողմից իրականացվող հողաշինարարության ծրագրերի տնտեսական բովանդակության և կառավարման կարգի, գյուղատնտեսության ու արդյունաբերության, ապրանքային կապերի աշխուժացման, հասարակության սոցիալական շերտավորման մասին: Իսկ Ս. Զուրաբյանի «Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր»(1959), Ն. Թովմասյանի «Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսագիտական հայացքները» (1966), «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը IX–XIV դարերում» (1970), «Սոցիալ-տնտեսագիտական միտքը Հայաստանում XV–XVIII դարերում» (1982), «Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր» (1988, համահեղինակ Հ. Թամրազյան), Մ. Գրիգորյանի «Հայաստանում մարքսիստական քաղաքատնտեսության տարածման պատմությունից (XIX դարի 80-ական թվականներից XX դարի 30-ական թվականներ)» (1976) և այլ աշխատություններում ուրվագծվում են հայ տնտեսագիտական մտքի հիմնական ուղղությունները ու առանձին շրջանների սոցիալ-տնտեսագիտական միտքը:

Հարկ է նկատել, որ վերը նշված աշխատություններում առաջադրվող շատ դրույթներ ելակետ ունեին տիրապետող տեսական ու գաղափարական պատկերացումները՝ որոշակի սահմաններ պայմանավորելով վերլուծությունների համար, դրույթները խցկելով ժամանակի սխեմատիկ պատկերացումներում:

1980-ական թվականների վերջերին խորհրդային տնտեսագիտական մտքի մթնոլորտում նկատելի էր մի աննախադեպ աշխուժություն: Լույս են տեսնում աշխատություններ, որոնցում տնտեսական երևույթներն ու կատեգորիաները սկսեցին ստանալ նոր մեկնություններ: Մ. Քոթանյանի, որը տնտեսագիտության ինստիտուտի տնօրենն էր 1987-ից, «Գիտատեխնիկական հեղափոխությունը և տնտեսագիտության տեսությունը» (ռուս., 1988) մենագրության մեջ առաջարկվում է ստեղծել միասնական քաղաքատնտեսություն՝ վերացնելով քաղաքատնտեսության արհեստական բաժանումը կապիտալիզմի և սոցիալիզմի, իսկ արտադրության, բաշխման, փոխանակության կամ սպառման հարաբերությունների քննության ժամանակ արտադրությունը ելակետային համարելու դրույթը, հասարակական, կոլեկտիվ և անձնական շահերի դասակարգման մեջ անձնական շահին վերջին ֆունկցիա հատկացնելու մտայնությունը, սոցիալիզմի ժամանակ արտադրության միջոցների հանրայնացման արդյունքում տնտեսական ու սոցիալական հակասության հիմքերը վերանալու մասին վարկածը, հասարակության մտավոր ոլորտի դերի, արժեքի ստեղծման ժամանակ արտադրողական և ոչ արտադրողական աշխատանքը սահմանազատող հայացքը և այլ հարցեր ստացել են այլ մեկնաբանություններ:

1990-ական թվականներին Հայաստանը դիմորոշվեց դեպի շուկայական տնտեսաձևը, որին պիտի ուղեկցեր որոնումների տրամաբանությունը: Արժեքների նոր համակարգի լինելիությունը հայ տնտեսագիտական մտքի համար ենթադրում էր նոր դիտակետեր: Ինստիտուտի հետազոտական գործունեության համար բնորոշ դարձան ամբողջատիրական էկոնոմիկայից շուկայականին անցման գործընթացները: Մ. Քոթանյանի «Շուկայա-

կան էկոնոմիկա» (1998) մենագրության մեջ քննության են առնվում բարեփոխումների ռազմավարության և տակտիկայի, այդ բնագավառում տեղ գտած բացթողումների ու սխալների հարցերը, հիմնավորվում են հանրապետության տնտեսական զարգացման հեռանկարային ծրագրերի մշակման, ազգային տնտեսական մոդելի ստեղծման, անկախության և ազգապահպանության ռազմավարական ուղղությունները:

2007-ից ինստիտուտի տարեգրության մեջ սկսվում է մի նոր շրջափուլ, երբ ՀՀ կառավարությունը որոշում կայացրեց տնտեսագիտական ուղղվածություն ունեցող ճյուղային տարբեր ենթակայության (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի ու գյուղատնտեսության նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն) երեք գիտահետազոտական ինստիտուտները՝ տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ, գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտ, կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպել և միացնել ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությանը: Ինստիտուտի տնօրինությունը ստանձնեց Վլադիմիր Հարությունյանը: Սկսվեց բարդ ու դժվարին գործընթաց՝ կապված միացյալ ինստիտուտի նոր կոլեկտիվի, նորացված գիտական խորհրդի, գիտական նոր ուղղությունների, ինչպես նաև ինստիտուտի գիտակազմակերպչական նոր կառուցվածքի ձևավորման հետ: Անցած տարիների ինստիտուտի գործունեությունը բնորոշվեց որոշակի առանձնահատկություններով. ա) հետազոտվող գիտական թեմաներին տրվեց առավել շատ գործնական ուղղվածություն՝ թեմային վերաբերող եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացնելով ՀՀ կառավարությանը՝ վերջինիս կողմից մշակվող հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթերում դրանք հաշվառելու ու ներառելու համար, բ) հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին նվիրված հանրապետական ամենամյա գիտաժողովի անցկացումը և գիտական հոդվածների ժողովածուների հրապարկումը, գ) ինստիտուտի գիտական կոլեկտիվի երիտասարդացումը, դ) հրապարակվող գրքերի տարեցտարի ավելացումն ու որակի բարելավումը:

Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ, տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ, ծառայության ոլորտի զարգացման և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ, տեսական հետազոտությունների ու տնտեսագիտական մտքի պատմության գիտական ուղղություններն իրենց թեմատիկ մտադրություններում համապատասխանում են արդի պահանջներին: Շուկայական տնտեսակարգը ենթադրում էր հարկային համակարգի արմատական փոփոխություն: Ու թեև իր ամբողջության մեջ ուրվագծվել է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը, սակայն նրա օրենսդրական դաշտում դեռևս առկա են անորոշություններ, հակասական կողմեր՝ հարկաբյուջետային իրավասությունների ու սոցիալ-տնտեսական պատասխանատվությունների կենտրոնի ու տեղերի հստակեցման և այլ առումներով: Եվ ոչ պատահականորեն վերջին տարիներին ինստիտուտում համակարգված ուսումնասիրությունների առարկա է դար-

ձել հարկային համակարգը՝ հետազոտական տարբեր խմբերի կողմից ուշադրության առնելով նրա տարբեր շերտերը (ղեկ. Վլադիմիր Հարությունյան): Ուշագրավ է «Հարկեր և հարկազանձում» աշխատությունը (հեղ. Վլադիմիր Հարությունյան, Դավիթ Հարությունյան, Տիգրան Հարությունյան): Նրանում ՀՀ հարկային օրենսդրության պատմությունը բաժանվում է երկու փուլերի՝ 1992–1997 թթ.՝ որպես առաջին կամ ձևավորման փուլ և 1997-ից հետո՝ որպես երկրորդ կամ բարեփոխումների փուլ: Ինչպես ամբողջ տնտեսական համակարգի, այնպես էլ նրա մի մասը կազմող հարկային համակարգի համար դա բեկման ժամանակաշրջան էր, երբ նորմատիվ օրենքներով կարգավորվածությունը, գործողության մեջ դրված հարկատեսակներն ու տուրքերը հաճախ իրական հատվածում ունենում էին այլ հետևանքներ՝ ազգային տնտեսության ամի լծակներից վերածվելով «պատժամիջոցների»: Նշված հարցերը ստացել են համապատասխան մեկնաբանություններ ու ժամանակի հոսքի մեջ վերհանվել հարկատեսակների և տուրքերի գործողության սահմաններն իրենց հակասական ու կատարելագործում ակնկալող պարագծերում: Այդ հիմնախնդիրների լուծման համատեքստում առաջարկվում են հարկային պարտավորությունների հաշվարկման կատարելագործման օրենսդրական ու մեթոդաբանական մոտեցումներ: Ըստ էության, կատարվում են ՀՀ հարկային օրենսդրության ընթերցումներ՝ կոնկրետացված ազգային տնտեսության տեսադաշտի վրա իրականության հետ համադրման, պարզաբանումների և միջազգային փորձի հաշվառման առումներով:

Անցած 90-ական թվականներից սկսած կարծես չափանիշ էր դարձել տնտեսության այս կամ այն ոլորտի վերափոխումներն արդարացնել որևէ տեսությամբ կամ որևէ երկրի փորձով, թեև որոշակի դեպքերում դրանք ունեցել են նաև քայքայիչ հետևանքներ: Այս իմաստով ֆինանսական հիմնախնդիրներն իրենց վերլուծական խորացումներն են ստացել համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման, ֆինանսական համահարթեցման, հարկման արտերկրյա մոտեցումների և Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառման հնարավորությունների մասին հրատարակած «Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսական հիմնախնդիրների լուծման ուղիները» (2008, հեղ. Վ. Հարությունյան, Ա. Թամազյան), «Ֆինանսական համահարթեցման հիմնախնդիրները» (2008, հեղ. Վ. Հարությունյան, Ա. Ազիզյան) աշխատություններում: Դրանցում երևույթների հետազոտությունը բարձրանում է էմպիրիզմի հարթությունից՝ իր լուծումների մեջ շարժվելով տեսականից դեպի իրականը: Եթե ուսումնասիրության առարկան տարածաշրջանն է, ապա շուկայական տնտեսությ ան պայմաններում տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ներուժի գնահատումը նախ և առաջ պետք է կայանա տարածաշրջանային զարգացման այն գործոնների գնահատման մեջ, որոնք արտացոլում են տարածաշրջանի մրցակցային առավելությունները: Շեշտելով տեղական ինքնակառավարման հաստատության ձևավորման ու տեղական բյուջեների ֆինանսական ապահովվածության հիմնախնդրի կարևորությունը՝ առաջադրվում է համայնքային բյուջեների ֆինանսական ինքնուրույնության ապահովման ծրագրային մոտեցումներ՝ կապված հանրապետական, մար-

զային և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների հստակ սահմանազատման, համայնքների խոշորացման և բյուջեների ծավալների օպտիմալացման, համայնքային բյուջեների եկամտային աղբյուրների անվանացանկի ընդլայնման, հարկերի հաշվառման ու դրանց նկատմամբ վերահսկողությունը հարկային մարմիններից տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանցելու հետ և այլն:

Ինստիտուտի ուսումնասիրությունների մի բաժինն էլ վերաբերում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի խնդիրներին: Հրատարակված աշխատություններում փորձեր են արվել ճգնաժամի դրսևորումներն ու հետևանքներն առնչել հանրապետության տարբեր ոլորտների խնդիրներին: Այս ուղղությամբ Վ. Հարությունյանի «Համաշխարհային ֆինանսական ճգնաժամ» (2009), Վ. Հարությունյանի և Վ. Խաչատրյանի «Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում» (2009) աշխատանքներն առաջին մենագրություններն են, որոնցում ուսումնասիրելով ՀՀ տնտեսության մեջ մակրոտնտեսական քաղաքականության առանձին մեխանիզմների ու գործիքների կիրարկման առանձնահատկությունները և տնտեսական հիմնահարցերի առկա վիճակն ու գնահատելով դրանց հետագա զարգացման միջոցառումներն ու հեռանկարները, ծավալուն վիճակագրական տվյալների համակարգման արդյունքում առաջարկվում են միջոցառումներ՝ տնտեսության ապագա կայունության կողմնորոշումների տեսանկյունից:

Տնտեսության իրական հատվածի ուսումնասիրություններն ընդգրկում են ՀՀ գյուղատնտեսական արտադրությունը, լեռնահանքային արդյունաբերությունը, արտաքին տնտեսական կապերի ոլորտները, որոնց վերաբերյալ հրատարակվել են Ս. Ղազարյանի և Է. Ղազարյանի □Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում□ (2012), Հ. Ավագյանի «Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» (2011) մենագրական աշխատանքները, «Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը» (2010) և «Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում» (2012) ժողովածուներն ու բազմաթիվ հոդվածներ: Դրանցում.

- *գյուղատնտեսության զարգացման համար կարևորվում է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը: Հիմնավորելով վերանայել ու հստակեցնել Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների սուբյեկտների դասակարգման գործող չափանիշները՝ ոլորտի համար կատարվում են առաջարկություններ (կոոպերացիայի տարբեր ձևերի կիրառում, արտադրության գոտիական մասնագիտացում, ինստիտուցիոնալ կառուցվածքների ստեղծում, տեղերում ագրովերամշակման ուղղվածության ձեռնարկատիրության խթանում, ներքին շուկայի և տեղական արտադրողների շահերի պաշտպանությանն ուղղված մաքսատուրքերի դրույքաչափերի վերանայում և այլն), որոնք իրենց հետևանքների մեջ բարերար ազդեցություն կունենան հանրապետության տնտեսական աճի վրա,*

• լեռնահանքային արդյունաբերության ոլորտի թեմատիկ ընդգրկումներն ուղղված էին ՀՀ մետաղական օգտակար հանածոների գնահատմանն ըստ մարզերի, իսկ Սոտքի և Մեղրաձորի հանքերի գծով, համապատասխան հաշվարկներով, տրվել են նաև ազնիվ մետաղների կորզման ու դրանց հետևանքով միջավայր թափված ծանր մետաղների և թունահարույց տարրերի քանակներն ու դրանց վտանգավոր էկոլոգիական հետևանքների գնահատականները,

• վերլուծվել են Հայաստան-Եվրամիություն, Հայաստան-Թուրքիա առևտրատնտեսական կապերը, որոնք որոշակի պայմաններում օգտակար են դիտվում հանրապետության համար Եվրամիության և տարածաշրջանային ինտեգրմանը:

Տնտեսական կապերի գլոբալացման արդի պայմաններում, տնտեսության արտաքին հավասարակշռության և վճարային հաշվեկշիռների, տարադրամի փոխարժեքի կարգավորման հարցերը դարձել են պետության մակրոտնտեսական քաղաքականության առաջնային նպատակներից: Դ. Հարությունյանի «Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի կառավարման հիմնախնդիրները» (2012), «Վճարային հաշվեկշռի պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» (2013) աշխատություններն այդ ոլորտի վերաբերյալ առաջին համակարգված ուսումնասիրություններն են, որոնցում հայտարարի է բերվում խնդիրն ինչպես իր պատմության, այնպես էլ նրա հետագա կատարելագործման առումներով: Մենագրություններն ինքնին ընդլայնում են խնդրի տարողությունը՝ վճարային հաշվեկշռի ձևավորում, պետական կարգավորում, մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցություն, արտահանման և ներմուծման միջև հարաբերակցության բարելավման հնարավորություններ, շառավիղներով:

Վ. Հարությունյան, Ա. Թամազյան, Ն. Հայրապետյան հետազոտական խումբը «Արտահանման աճի և տնտեսության մասնագիտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (2009) մենագրությունում արտահանման աճը քննության է ենթարկում տնտեսության մասնագիտացման հետ ունեցած կապերի մեջ: Անդրադառնալով խնդրի տեսական ու մեթոդական հիմքերին՝ դիտարկվում են ներդրումային ու արժութային փոխանակության, ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հարցերը, որոշակի հայացքով ուրվագծում Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական գործունեության քանակական ու որակական բնութագրիչներն ու միտումները:

Հետազոտություններ են կատարվել մարդկային կապիտալի, ապագա մարդկային հասարակության էության բնութագրման ու ձևավորման, գիտության դերի վերաբերյալ (Բ. Եղիազարյան): Անդրադառնալով մարդկային կապիտալ հասկացության էությանը, որն առնչվում է երևույթների տարբեր տեսանկյունների հետ, ինչը կարող է հնարավորություն տալ հասկանալու արդի տնտեսական փոխակերպությունները, սահմանազատվում են մարդկային ռեսուրս, կադրային ռեսուրս, կադրային կապիտալ, մարդկային ներուժ, մարդկային զարգացում հասկացությունները: Մարդկային հասարակության, այսպես կոչված, անշեղ զարգացման տնտեսագի-

տական օրենքի գործողությունը, մարդկության սոցիալական ու բարոյական կատարելագործման իրական միջոցները կապվում են գիտության հետ: Իսկ վերջինս պայմանավորված է գործող կրթական համակարգով: Եվ որպես զարգացման և տնտեսական աճի վերաբերյալ նոր համակարգի մշակման անդրադարձ պիտի դիտել «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը» հեղինակային կոլեկտիվի (Յու. Սուվարյան, Վ. Հարությունյան, Վ. Սարգսյան, Վ. Խաչատրյան) հետազոտությունը (2011): Դրանում գիտակրթական համակարգ-տնտեսական զարգացում կապը քննության է ենթարկվում հանրակրթություն-ասպիրանտական կրթություն հիերարխիայով, յուրաքանչյուրի հիմնախնդիրների և լուծման ուղիների վերաբերյալ առաջարկություններով՝ կապված կրթություն-գիտություն-արտադրություն կապի ուժեղացման, կրթության տարբեր աստիճանների միջև օպտիմալ հարաբերության հասնելու, հիմնարար, կիրառական և բուհական գիտությունների միջև տարանջատվածության կրճատման, գիտության պետական ֆինանսավորման կատարելագործման և այլ խնդիրների հետ:

Սույն թեմատիկայի օրգանական շարունակությունն է «Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը» (2013) հեղինակային խմբի (Յու. Սուվարյան, Վ. Հարությունյան, Վ. Սարգսյան, Վ. Խաչատրյան) ուսումնասիրությունը, որի քննության հիմնախնդիրներն են՝ գիտության և արտադրության ինտեգրման, կրթական համակարգի կառավարման կազմակերպական կառուցվածքի, գիտակրթական համակարգում և տնտեսության կառավարման ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման սկզբունքներն ու մոդելները:

Ինստիտուտում վերջին տարիներին ուշագրավ ձեռնարկումներից են տնտեսագիտական մտքի ընդհանուր պատմությանը և հայ տնտեսագիտական մտքի պատմությանը վերաբերող ուսումնասիրությունները (Վ. Հարությունյան, Ռ. Սարինյան, Մ. Աղայան): Ծրագրային այդ իրացումներից է □Նշանավոր տնտեսագետների տողանը. գիտակենսագրական ուրվագծեր□ մինչքեյնսյան և հետքեյնսյան ժամանակաշրջաններն ընդգրկող երկհատորյակը (2010, 2012): Աշխատության գիտակենսագրական ուրվագծերը, ըստ էության, էքսկուրս է՝ սկսած մերկանտիլիստներից մինչև մինչքեյնսյան շրջան և հետքեյնսյան շրջանի տնտեսագիտական մտքի ուղեգծերով, որն արտահայտում է համաշխարհային տնտեսագիտական մտքի հետագիծը նշաձողերի և դպրոցների հաջորդափոխության մեջ: Ուրվագծերի համար ընտրվել է համառոտ հանրագիտարանական բառարանի սկզբունքը, որտեղ ընդգրկված տնտեսագետներից յուրաքանչյուրի վերաբերյալ ներկայացվում են կյանքի և գործունեության փուլերը՝ հիմնական ուշադրությունը դարձնելով գիտական գործունեության ու առաջադրած դրույթների՝ տնտեսագիտության համար ունեցած նշանակության և տնտեսական կյանքի վերաբերյալ գործնական լուծումների վրա: Նմանատիպ մի փորձ է նաև «Հայ տնտեսագետներ» (2010) աշխատությունը: Այն, ըստ էության, հայ տնտեսագիտական մտքի պատմության անձնականացված ուղեցույց է՝ նրանում ընդգրկված անունների գիտակենսագրական ուրվագծերի ձևով՝ XIX դարի կեսերից մինչև այժմ: Այդ ընթացքում հայ

տնտեսագիտական միտքն անցել է փոխակերպությունների տարբեր հատվածներ՝ տնտեսական երևույթների ճանաչողական տարամոտեցումներով ու չափումներով, տնտեսական հարցերի բարդ ու հակասական լուծումներով, վերելքներով և վայրէջքներով: Աշխատությունն իր նպատակի մեջ հեռու է ճշտի և սխալի սահմաններ որոշելու հավակնությունից, այն արտահայտում է հայ տնտեսագիտական մտքի շարժման ընթացքն ինչպես որ կա:

Համաշխարհային ու հայ տնտեսագիտական միտքը գիտակենսագրական ուրվագծերի ձևով ընդհանրացնելու փորձը հայերեն լեզվով առաջինն է, որը կարող է օգտակար լինել և՛ մասնագետներին, և՛ հայ ընթերցող հասարակությանը:

Հրատարակվել է «Էջեր հայ տնտեսագիտական մտքի պատմությունից» աշխատությունը (Ռ. Սարինյան, Վ. Հարությունյան, 2011), որտեղ վեր են լուծվում XX դարի հայ հասարակական և տնտեսագիտական մի շարք ներկայացուցիչների հայացքները, որոնք ընդլայնում են հայ մտքի իմացության ու տնտեսական կյանքի ճանաչողության սահմանները: Ռ. Սարինյանի «Արդի հայ տնտեսագիտական տեսություն» գրքերը (2007, 2011) վերաբերում են նորագույն շրջանի հայ տնտեսագիտական մտքի չհետազոտված ոլորտին և նպատակ ունեն որոշ պատկերացում տալ նրա արդի դիտակետերի, որոնումների և ազգային տեսության հետագծի առումով:

Ինստիտուտի գիտական թեմաների կիրառական մշակումների արդյունքները՝ եզրակացությունների և առաջարկությունների ձևով, պարբերաբար ներկայացվել են հանրապետության կառավարման տարբեր մարմիններին:

Վերջին տարիներին ինստիտուտում հրատարակչական գործի կազմակերպումը դրվել է նոր հիմքերի վրա: Հրատարակչական պլանների աշխատանքները ստանում են իրենց իրացումները, իսկ պարբերաբար կազմակերպվող «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովների նյութերի ժողովածուները՝ մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ, տնտեսության իրական հատված, ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրություն, տեսական հետազոտություններ և տնտեսագիտական մտքի պատմություն ընդգրկուն բաժանումներով հարցերը հանրապետության տնտեսագետ մտավորականության համար դարձել են հետազոտությունների արդյունքների հրատարակության հանդեսներ:

ИНСТИТУТ ЭКОНОМИКИ ИМ. М. КОТАНЯНА

ВЛАДИМИР АРУТЮНЯН, РОБЕРТ САРИНЯН

Резюме

Действующий сектор экономики Академии наук АрмССР в 1955 году был преобразован в Институт экономики, тем самым положив на-

чало формированию академической экономической школы республики. Особенности деятельности Института в новейший период связаны с новыми научными направлениями и с формированием новой научно-организационной структуры.

M. KOTANYAN INSTITUTE OF ECONOMICS

VLADIMIR HARUTYUNYAN, ROBERT SARINYAN

S u m m a r y

In 1955, the Economics sector of the Academy of Sciences of the ArmSSR was reorganized into the Institute of Economics, thus building the ground for the emergence of Academic School of Economics in the Republic. The peculiarities of the activities of the Institute in the modern era are related with new research directions and with formation of new scientific-organizational structure.